

**«ԿԱՆԹԵՂ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՀեռաՀարորդաԿՑԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՆԳՆԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի ՀԱՊՀ Վ/մ ավագ դպրոցի

ուսուցիչ՝ Արմենուհի Ղազարյան

Դեկավար՝ Լուսինե Գրիգորյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

Գլուխ1. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....7

1.1.ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ.....7

1.2. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....25

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. 21-րդ դարում օտար լեզուների ուսուցման և ուսումնառության հետ կապված խնդիրները շոշափում են առանց բացառության բոլոր բնագավառներում մասնագիտացող ուսանողների կենսական շահերը: Ուստի օտար լեզուների դասավանդման արդի մեթոդիկան պետք է ի զորու լինի ժամանակին արձագանքել նոր մարտահրավերներին: Մասնավորապես՝ օրեցօր աճող հեռահաղորդակցական միջոցներից օգտվելու պահանջները պարտադրում են մասնագետներին վերանայել օտար լեզուների ուսուցման թե՛ մոտեցումները, թե՛ սկզբունքները, թե՛ նպատակն ու խնդիրները:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցական, մասնավորապես՝ համակարգչային միջոցները մեծ հնարավորություններ են ընձեռում ինչպես «վիրտուալ», այնպես էլ իրական միջմշակութային հաղորդակցության համար: Փաստորեն, համացանցի միջոցով հեռահաղորդակցումը նոր միջմշակութային հաղորդակցման ձև է: Այս առումով միջմշակութային հեռահաղորդակցումը դարձել է տարբեր գիտությունների ուսումնասիրության օբյեկտ և նրա բովանդակային և գործառական բնութագրերը դեռևս հետագա բացահայտման անհրաժեշտություն ունեն: Ինչ վերաբերում է օտար լեզուների դասավանդման մեթոդիկային, ապա այդ բնագավառի հետ առնչվող բոլոր մասնագետները համակարծիք են, որ հեռահաղորդակցական ժամանակակից միջոցները մեծ դեր կարող են ունենալ օտար լեզուների դասավանդման գործում:

Ասվածը հիմք ընդունելով՝ հետազոտության արդիականությունը կասկած չի հարուցում, առավել ևս, որ այն համահունչ է ՀՀ կրթական ողջ համակարգի բարեփոխման ներկայիս բովանդակությանը և պահանջներին: Այդ տեսակետից օտար լեզուների դասավանդման բոլոր մասնագետները և մասնագիտացողները քաջ գիտակցում են, որ այդ բնագավառում անհրաժեշտ է մշակել արդիական հայեցակարգեր, որոնք խթան կհանդիսանան ինչպես ուսումնական նոր ծրագրերի ստեղծման, այնպես էլ կիրառվող մեթոդների, սկզբունքների, միջոցների և ձևերի վերաարժեքավորման ու դրանց նոր տարբերակների մշակման համար:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ օտար լեզուների ուսուցումը մեզանում կազմակերպվում է հաղորդակցման բնական միջավայրի բացակայության պայմաններում, և հեռահաղորդակցական ժամանակակից միջոցներն ինչ-որ չափով լրացնում են այդ բացը: Հենց այդ համատեքստում էլ ատենախոսությունում հետազոտվում է տեխնիկական ուղղվածության բուհերում հեռահաղորդակցական համակարգերի ներդրման հիմնախնդիրը:

Տվյալ հետազոտության արդիականությունը հիմնավորվում է նաև նրանով, որ ՀՀ-ում չեն իրականացվել հեռահաղորդակցական միջոցներով մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցմանը նվիրված համակողմանի ուսումնասիրություններ: Այդ առումով այստեղ կարևորվում է տեխնիկական ուղղվածություն ունեցող բուհում հեռահաղորդակցական համակարգերի ներդրման հիմնախնդիրը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է բացահայտել հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների միջոցով անգլերենի ուսուցման առանձնահատկությունները և

մշակել դրանց միջոցով սովորողների միջմշակութային հաղորդակցության իրազեկությունը զարգացնող համապատասխան ռազմավարություն և մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների միջոցով օտար լեզուների ուսուցմանը վերաբերող մեթոդական գրականություն:
- Համեմատել խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության ձևավորման հոգեբանամանկավարժական պայմանները և մշակել համապատասխան ռազմավարություն, ինչպես նաև հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների շարունակական ներդրման և կիրառման մեթոդական համակարգ:
- Ստեղծել անգլերենի հեռահաղորդակցական ուսուցման նախագծային օպտիմալ մոդել և հիմնավորել միջմշակութային հեռահաղորդակցության կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդական համակարգը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ այն է, որ ուսումնասիրվել են հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները և մշակվել է մասնագիտական կողմնորոշման անգլերենի հեռահաղորդակցական իրազեկության ձևավորման և զարգացման նոր մեթոդական համակարգ, ըստ որի՝ նախագծային մեթոդն առանցքային դեր է խաղում անգլերենի ինտերակտիվ ուսուցման համակարգում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- ներկայացվել է էլեկտրոնային, հեռահաղորդակցական անգլերենի ուսուցման հարմարման մոդելն անհատական և խմբային նախագծերի շրջանականակներում,
- հիմնավորվել է հեռահաղորդակցական տարբեր խոսույթների հետ աշխատանքի ուսումնական մոդելը,
- ստեղծվել է նախագծային մեթոդիկայի շրջանակներում ձևավորված հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների կիրառման՝ անգլերենի ուսուցման մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել վիրտուալ բնագրային տեքստեր ընտրելու և նրանց հետ աշխատելու վարժությունների համակարգի մշակման, ինչպես նաև անգլերենի դպրոցական և բուհական նոր դասընթացների կազմակերպման, դասագրքերի, ձեռնարկների ստեղծման, կոնկրետ ծրագրերի կազմման, դասերի պլանավորման ու իրականացման համար:

ԳԼՈՒԽ 1. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Գաղտնիք չէ, որ ճարտարագիտությունը որպես մասնագիտություն ընտրած ուսանողներն ավելի լավ են օգտվում ժամանակակից հեռահաղորդակցական միջոցներից: Օտար լեզուների ուսուցման և ուսումնառության կարևորությունը սկսում են գիտակցել տարբեր մասնագիտություններ ընտրած մարդիկ: Օտար լեզվի դասավանդման մեթոդիկան պիտի կարողանա ժամանակին արձագանքել նոր ժամանակի մարտահրավերները: Օրեցօր աճող հեռահաղորդակցական պահանջները ստիպում են գիտնականներին վերանայել օտար լեզուների ուսուցման թե՛ մեթոդները, թե՛ սկզբունքները, թե՛ նպատակն ու խնդիրները: Սկզբունքային նշանակություն ունի հատկապես օտար լեզուների ուսուցման նպատակների վերանայումը, քանի որ արդի փուլում խնդիր է դրվում ձևավորել սովորողների մոտ երկրորդային լեզվական անձնավորություն, որը հնարավորություն է տալիս նրանց դառնալ միջմշակութային հաղորդակցության ակտիվ մասնակից: Հեռահաղորդակցական իրազեկության զարգացման տեսանկյունից կարևորվում են միջմշակութային հաղորդակցությանը նվիրված աշխատանքները (Մ. Օ. Գյոդակյան (2007), Ն. Ս. Հայրապետյան (2010), Բ. Մ. Եսաջանյան (2000), Ի. Կ. Կարապետյան (2010), И.И. Халеева (1989), Тер-Минасова (2000) և այլոք):

Համացանցի միջոցով հեռահաղորդակցումը նոր միջմշակութային հաղորդակցման ձև է: Միջմշակութային հեռահաղորդակցումը տարբեր գիտությունների ուսումնասիրության օբյեկտ է, և նրա բովանդակային ու գործառական բնութագրերը դեռևս բացահայտման անհրաժեշտություն ունեն: Սակայն գիտնականները համակարծիք են այն հարցում, որ հեռահաղորդակցական

Ժամանակակից միջոցները մեծ դեր կարող են ունենալ օտար լեզուների դասավանդման գործում:

Ակնհայտ է, որ արդի փուլում կան բոլոր նախապայմանները հեռահաղորդակցական միջոցներով անգլերենի ուսուցման և ուսումնառության կազմակերպման համար: Ժամանակակից դպրոցականների և ուսանողների մտավոր կարողությունները և հեռահաղորդակցական հմտությունները հնարավորություն են տալիս բավականին բարձր մակարդակով կազմակերպել անգլերենի հեռահաղորդակցական ուսուցում կրթության տարբեր ոլորտներում, նրա տարբեր մակարդակներում: Նրանցից շատերը շատ լավ օգտվում են համակարգչային ծառայություններից և հաղորդակցվում են իրենց հասակակիցների հետ մեր երկրում և արտերկրում:

Ճարտարագետ-ուսանողները հեշտությամբ և մեծ արդյունավետությամբ օգտվում են վիրտուալ հաղորդակցության ժամանակակից միջոցներից.

- էլեկտրոնային փոստ (e-mail),
- միջմշակութային ֆորումներ,
- համացանցային զրույցներ (chats),
- ինտերնետ պեյջերներ կամ ակնթարթային տեղեկատվության փոխանցման կլիենտներ (IM Clients),
- IP- հեռախոսագրում,
- տեսագիտաժողով,
- բլոգ (M. B. Попова, 2007, 312):

Հեռահաղորդակցական անգլերենի ուսուցումն ու ուսումնառությունը կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել համաեվրոպական լեզվական քաղաքականության հիմնադրույթները:

Հայաստանի կրթական համակարգը թևակոխում է մի նոր փուլ, մի նոր այսպես կոչված հետարդյունաբերական, տեղեկատվական դարաշրջան: Այդ առումով նույնպես կարևորվում է հեռահաղորդակցական միջոցների կիրառման հիմնախնդիրն անգլերենի ուսուցման գործընթացում:

Հեռահաղորդակցական միջոցների միջոցով օտար լեզուների ուսուցումը նպաստում է սովորողների սոցիալականացմանը, նրանց մեջ զարգացնում բարձր բարոյականային հատկանիշներ, սերմանում հարգանք և սեր տարբեր դիրքի և տարիքի, սոցիալական կարգավիճակի, հավատի մարդկանց նկատմամբ: Միջմշակութային հաղորդակցության զարգացումն օգնում է սովորողներին հանդուժողաբար վերաբերվել թե՛ մերձավորներին, թե՛ օտարներին:

Արդի փուլում օրեցօր աճում է միջմշակութային հաղորդակցության դերը, որը ենթադրում է շփման կաղապարների իմացություն, մշակութային կարծրատիպերի, արժեքային կողմնորոշիչների, մշակութային պատկերների և խորհրդանիշների, նորագույն հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում:

Համապատասխան մեթոդական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հեռահաղորդակցական նախագծերի մեթոդի նպատակասլաց կիրառումն ուսուցման գործընթացում արդյունավետ միջոց է օտար լեզուների ուսուցման թե՛ դպրոցական, թե՛ բուհական օտար լեզուների ուսուցման համակարգում:

Ակնհայտ է, որ մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացը չի կարող ապահովել օտարալեզու լեզվակիրներին բնորոշ շփում: Չնայած այստեղ խոսք է գնում կոնկրետ գործունեության ոլորտում գործող, գործունեություն ծավալող մարդկանց շփման մասին: Այստեղ կարելի է առանձնացնել «մասնագիտական կողմնորոշման շփում» հասկացությունը, քանի որ այն ներկայացնում է որոշակի ենթալեզու և առանձնանում է հստակ դրդապատճառային կամ մոտիվացիոն ֆոնով: Հետաքրքիր է այդ առումով Գ. Ժ. Պոտիլիկոյի մոտեցումը, ըստ որի՝ «շփման

պահանջմունքը» կարելի է հավասարեցնել ինքնապաշտպանության պահանջմունքին (Г. П. Потылико, 1984, 6):

«Հաղորդակցություն» /լատ. Communication - «ընդհանրացնել, կապել» բառն ունի երեք մեկնաբանություն. ա/ նյութական և հոգևոր աշխարհի ցանկացած օբյեկտների կապի միջոց, բ/ շփում, մարդուց մարդուն տեղեկատվություն հաղորդելու միջոց, գ/ տեղեկատվության փոխանցում և փոխանակում հասարակության մեջ նրա վրա ներգործելու նպատակով (Современный словарь иностранных слов, 1992, 294):

Վերլուծելով «շփում» և «հաղորդակցություն» հասկացությունները իրենց պատմահամեմատական կտրվածքով, Լ.Ռ. Սանոյանն անդրադառնում է խորհրդային և հետխորհրդային շրջանի գիտնականների՝ մասնավորապես Ե. Վ. Շորոխովայի, Բ. Ն. Լոմովի, Բ. Դ. Պարիզինի, Տ. Ի. Օյգեմանի աշխատանքներին: Նա բացահայտում է այն միտումները, որոնք բնորոշ են եղել նախորդ դարի երկրորդ կեսերին, առ այն, որ գիտնականները հաղորդակցության տարբեր փուլերում առանձնացնում են «արտաքին աշխարհի գործոնները», ինչպես նաև հաղորդակցության և շփման իրականացման անհատական, հոգեբանական գործոնները:

Հաղորդակցությունը կենտրոնական հասկացություն է: Նրա էությունն այն է, որ այն նպատակամղված շփում է, որը իրականացվում է կոնկրետ իրադրություններում՝ համաձայն խոսքային գործունեության նորմերի (В. П. Конечкая, 1997, 8-9):

1970-80-ական թվականների հայրենական գիտնականներն այն կարծիքի են եղել, որ հաղորդակցությունը խոսքային գործունեության դրսևորում է:


Ընդհանուր առմամբ, դեռևս նախորդ դարի կեսերին, գիտնականներն գալիս են այն հետևությանը, որ լեզու գիտենալ, նշանակում է այդ լեզվով յուրացնել

սոցիալ-մշակութային պատմական նորմեր և արժեքներ, այսինքն՝ լեզուն հանդես է գալիս մարդու սոցիալականացման հիմնական միջոց և նախապայման, ինչ-որ տեղ նաև աղբյուր և նպատակ (Ե. Մ. Есаджанян 2001, Թ. Մ. Ойзерман 1989, Ս. Ս. Халева, 1989):

Փաստորեն, օտար լեզու ուսումնասիրողը սոցիալականացման ընթացքում յուրացնում է ուսումնասիրվող լեզվի հանրամշակութային իրողությունները՝ առանց լեզվակիրների հետ անմիջական շփվելու: Ըստ վերլուծվող տեսությունների, ներկայացնում ենք լեզվակրի սոցիալականացման բաղադրամասերը:


Կադապար 1.

Լեզվակրի



Կադապար 2.

Երկրորդային լեզվական անձի սոցիալականացման բաղադրամասերը




Այսպիսով, խնդիր է դրվում հեռահաղորդակցական միջոցներով փոխհատուցել այն բացը, որն առաջ է գալիս առաջնային և երկրորդային լեզվական անձերի լեզվական և ֆոնային գիտելիքների միջև, ընդ որում՝ ուսումնական պայմաններում:

Տեխնիկական բուհում ֆոնային գիտելիքները մասնագիտական ուղղվածություն ունեն, այն առումով որ, դրանք անհրաժեշտ է դիտարկել ընդհանուր մշակույթի և մասնագիտական մշակույթի յուրացման մակարդակներում:

Ինչպես հայտնի է, շատ դժվար է սովորել օտար լեզու առանց ճանաչելու տվյալ լեզվով հաղորդակցվողների մշակույթը: Ինչ վերաբերում է մասնագիտական կողմնորոշման անգլերենի կամ անգլերեն տեխնիկական ենթալեզվի ուսուցմանը, ապա ճարտարագետները պետք է ուսումնասիրեն ոչ միայն լեզվակիրների մտածելակերպի, հոգեբանության, այլև անգլախոս ճարտարագետների մասնագիտական և խոսակցական լեզուների առանձնահատկությունները: Մի կողմից՝ անգլախոս ճարտարագետը տիրապետում է անգլերեն խոսակցական

բառաչերտի ոճաժանրային առանձնահատկություններին: Մյուս կողմից՝ նա յուրացնում է մեծ քանակությամբ մասնագիտական բնույթի տերմիններ: Նրա բառապաշարի երրորդ շերտն են կազմում միջազգային հեռահաղորդակցական բառերը և արտահայտությունները, որոնք հայախոս ուսանողներին հիմնականում ծանոթ են:

Գծապատկեր 1.





նշված բառաչերտերը, որպեսզի կարողանան հաղորդակցվել լեզվակիր և ոչ լեզվակիր գործընկերների և հաճախորդների հետ: Այդպիսի մակարդակի հասնելու համար անհրաժեշտ է բավականին շատ ժամանակ, նոր մեթոդներ և սկզբունքների կիրառում, համապատասխան ուսումնամեթոդական բազա:

Շատ դեպքերում ոչ միայն ուսանողները, անգամ դասախոսները չեն գիտակցում համապատասխան տեքստը, տեքստի հատվածը, իրադրությունը, բառակապակցությունը, ասույթն ու ասացվածքը չհասկանալու պատճառը: Հեռահաղորդակցական միջոցների շարունակական զարգացման պայմաններում, հնարավորություն է ստեղծվում շատ արագ հաղթահարել առաջ եկած

տեղեկատվական բացը: Դա վերաբերում է թե՛ լեզվաերկրագիտական բնույթի, թե՛ նեղ մասնագիտական ուղղվածության տեղեկատվությանը:

Գծապատկեր 2. Միջմշակութային հաղորդակցության բաղադրամասերը մասնագիտական կողմնորոշման անգլերենի դաշնթացում



Եթե անգլերենի ուսուցման մասնագիտական դասընթացում շեշտը դրվում է մշակույթների երկխոսության ուսուցման վրա, ապա մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացները պետք է կոնկրետացնեն նեղ մասնագիտական մշակույթի շրջանակներում տվյալ ենթալեզվի ուսուցման խնդիրները:

Հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է թե՛ լեզվական, թե՛ գործաբանական փոխներթափանցման հաղթահարմանը: Ակնհայտ է, որ նշված տեխնոլոգիաները փոխհատուցող գործառույթ են իրականացնում: Փոխներթափանցման ավանդական սահմանումը, առ այն, որ երկու և ավել լեզուները իրար վրա կառուցվածքային, նշանակությունների և այլ մակարդակներում կարող են բացասաբար ազդել, կորցնում է իր արդիականությունը (Ю. А. Жлуктенко, 1974, 61):

Ուսանողները պիտի գիտենան, որ օտալեզու հաղորդակցությունը հիմնականում լինում է միջմշակութային և ոչ թե՛ ներմշակութային: Այլ մշակույթների ներկայացուցիչների միջև շփումն իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան հուզազգայական դրական ֆոն, քանի որ հաղորդակցվողները ստիպված են հաղթահարել հոգեբանական, մշակութային, իմացական տարբեր

բնույթի դժվարություններ: Անժանոթը, նորը, անհասկանալին, անսովորը կարող են դառնալ հակազդեցության, անհանդուրժողականության, առճակատման պատճառ:

Մշակույթն այս ենթատեքստում կարևորվում է նրանով, որ իր մեջ ներառում է լեզուն: Մշակույթ հասկացությունը բազմանշանակ է բոլոր եվրոպական լեզուներում: Այն ներառում է որոշակի մարդկանց խմբի որոշակի ժամանակում ավանդույթները, հավատալիքները, արվեստը, երաժշտությունը, կենսակերպը:

Այսպիսով, առանցքային է դառնում սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը: Ընդ որում, կարևորվում է սովորողների հետազոտական, որոնողական և ստեղծագործական աշխատանքի դերը:

1.2. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Միջմշակութային հաղորդակցության ուսուցման մեջ անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների լայն կիրառումը չափազանց կարևոր է, քանի որ միջմշակութային հաղորդակցությունը նոր առարկա է, որը դեռ պետք է իր տեղը նվաճի բուհերում դասավանդվող մյուս առարկաների շարքում:

Հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ընթացակարգեր մշակելիս, մեթոդիստները պետք է հաշվի առնեն այն բոլոր մոտեցումները, որոնք ձևավորվել են հարակից գիտությունների ոլորտներում, մասնավորապես «միջմշակութային վարքի» նկատմամբ: Միջմշակութային վարքի ուսումնասիրության մեթոդները նույնպես կարելի է հաշվի առնել նշված տեխնոլոգիաների կիրառման գործընթացում:

Ինչպես հայտնի է, ուսուցման նախագծային մեթոդն անձնակողմնորոշիչ մոտեցման գործնական արտահայտություններից մեկն է: Այն ենթադրում է հանձնարարությունների համագործակցային կատարում: Այն զարգացնում է սովորողների ստեղծագործական կարողությունները: Նախագծային մեթոդիկայի էությունն այն է, որ պարապմունքների նպատակն ու նրան հասնելու եղանակները որոշում են սովորողները՝ ըստ իրենց հետաքրքրությունների, անհատական առանձնահատկությունների, պահանջմունքների, դրդապատճառների, ունակությունների: Այսպիսով, տեղի է ունենում սովորող-դասավանդող, սուբյեկտ-օբյեկտ փոխհարաբերությունների ավանդական կաղապարի հիմնային փոփոխություն: Այսինքն՝ տեղի է ունենում անցում ուսուցչակենտրոն կաղապարից դեպի աշակերտակենտրոն կաղապարը:

Նախագծային մեթոդը հնարավորություն է ընձեռում ծավալել դասերի ժամանակ բուռն քննարկումներ, ընդ որում՝ օտար լեզվով: Անգլերենի խմբերը վերածվում են հետազոտողների՝ զույգերի, խմբերի, ովքեր լուծում են հետաքրքիր, գործնական նշանակություն ունեցող, դիդակտիկական, միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից մատչելի հարցեր:

Կարևոր է, որ ամեն մի իրականացվող նախագիծ պարունակի հիմնախնդիր: Ուսանողները պիտի ունենան ոչ միայն հաղորդակցական, հեռահաղորդակցական, միջմշակութային հաղորդակցական, այլև մտավոր, ստեղծագործական կարողություններ: Մի կողմից, նախագծային մեթոդն օտարալեզու հաղորդակցական իրազեկության միջոց է: Մյուս կողմից, նրա կիրառումը պահանջում է համընդհանուր ուսումնական և խոսքային կարողությունների որոշակի մակարդակ: Այստեղ առաջին պլան է մղվում ներառական գիտելիքի դերը: Այսինքն՝ քննարկվող ցանկացած հիմնախնդիր դիտարկվում է բարոյական, պատմական, գիտական, քաղաքական, լեզվամշակութային և այլ տեսանկյուններից:

Նախագծային աշխատանքն օգնում է սովորողներին ձևավորել այնպիսի կարողություններ, ինչպիսիք են՝

1. պրոբլեմն առանձնացնելու,
2. ստացված արդյունքները վերլուծելու,
3. ստացված արդյունքները ամփոփելու և ներկայացնելու կարողություններ և հմտություններ:

Առաջին փուլում իրականացվում է հիմնախնդրի հիմնավորում: Դասախոսն ուսանողների հետ հստակեցնում է հետազոտության խնդիրները: Նրանք որոշում են ստեղծվող արդյունքի մոդելը, նրա դերը և նրանից օգտվողների շրջանակները: Կազմավորվում է նախագծային աշխատանք իրականացնող ուսանողների խումբը և բաշխվում են նրանց պարտականությունները:

Առաջին պլան են մղվում ուսանողների պահանջմունքները, նրանց հետաքրքրությունների շրջանակը: Ուսանողները որոշում են նախագծի թեման և կատարման փուլերը:

ՀԱՊՀ- ի Պ. Մելքոնյանի անվան Վանաձորի մասնաճյուղի մի քանի ֆակուլտետներում անցկացվում են անգլերենի նախագծային դասեր: Թե՛ մեքենաշինության, թե՛ քիմիական ֆակուլտետներում նախագծային աշխատանքները բաժանվում են երեք փուլի: Առաջին փուլում նախագծային աշխատանք իրականացնող բոլոր խմբերը ուսումնասիրում են հեռահաղորդակցական Across cultures նախագիծ, որը վերաբերում է անգլախոս երկրների և Հայաստանի կյանքի, տնտեսության տարբեր ոլորտներին:

Երկրորդ փուլը վերաբերում է անգլախոս երկրների քիմիական արդյունաբերությանը, իսկ երրորդ փուլը՝ Հայաստանի քիմիական արդյունաբերությանը և նրա զարգացման հեռանկարներին: Այդպիսի աշխատանք իրականացնելու համար անհրաժեշտ է, որ ուսանողները ունենան

համապատասխան պատրաստվածություն, ընդ որում՝ ոչ միայն անգլերենից, այլև ինֆորմատիկայից, մասնագիտությունից և այլն:

Մինչ նախագծային աշխատանքի իրականացումը մեր կողմից անցկացվեց ուսանողների իմացական, հեռանկարային և մասնագիտական պահանջմունքների վերլուծություն, որի անցկացման համար առաջադրվել են հետևյալ հարցերը.

1. սիրում էք Ձեր մասնագիտությունը

- այո
- ոչ
- չգիտեմ

2. ո՞վ է ընտրել Ձեր մասնագիտությունը

- ծնողները
- ես
- ընտրել եմ պատահաբար

3. կարո՞ղ եք հանուն մասնագիտական գործունեություն ծավալելու գործուղվել հեռավոր երկիր կամ շրջան

- այո
- ոչ
- չգիտեմ

4. հավատո՞ւմ եք, որ Վանաձորում կվերականգնվեն արդյունաբերական ձեռնակությունները

- այո
- ոչ
- չգիտեմ

5. ուզո՞ւմ եք ուսումնասիրել զարգացած երկրների առաջավոր փորձը, եթե դրա նախապայմանն օտար լեզվի իմացությունն է

- այո

- ոչ
- չգիտեմ

6. հնարավոր է դառնալ լավ ճարտարագետ, եթե չեք ուսումնասիրում զարգացած երկրների հարուստ փորձն անգլերեն լեզվով

- այո
- ոչ
- չգիտեմ

7. հնարավոր է դառնալ լավ ճարտարագետ, եթե չեք ուսումնասիրում զարգացած երկրների հարուստ փորձը առանց հեռահաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու

- այո
- ոչ
- չգիտեմ

8. հնարավոր է առանց անգլերենի լավ իմացության օգտվել ժամանակակից հեռահաղորդակցական տեխնոլոգիաներից

- այո
- ոչ
- չգիտեմ

Ինչպես ցույց է տալիս քիմիական ֆակուլտետի ուսանողների հետ անցկացված հարցումը, նախագծային աշխատանքն արդյունավետ է այն ուսանողների համար, ովքեր սիրում են իրենց մասնագիտությունը, երազում են հասնել լավ կամ բարձր արդյունքների ապագա մասնագիտության ոլորտում, հեշտությամբ օգտվում են ժամանակակից հեռահաղորդակցական տեխնոլոգիաներից:

Կարևոր է այն, որ ուսուցման ընթացքում ուսանողները հասկանան, որ անգլերենը նույնքան կարևոր է արդի փուլում, որքան համակարգչային տեխնիկայից օգտվելու կարողությունը կամ բուն մասնագիտական գիտելիքները:

Բուն նախագծային աշխատանքի կազմակերպման բոլոր փուլերում դասախոսի կարևորագույն գործառույթներից է հստակ թեմաների առաջադրումը, համապատասխան կայքերի անվանումը: Նախընտրելի են անգլալեզու կայքերը, քանի որ անգլերենի յուրացմանը նպաստում են ոչ միայն նախագծի թեմայի որոշումը, համապատասխան դերերի բաշխումը, այլև պահանջվող նյութի որոնման, ընտրության և, իհարկե, ներկայացման ընթացակարգերը:

Կարևոր է այն, որ ուսանողները սովորում են տեղեկատվություն փնտրել և գտնել ոչ միայն համացանցից, այլև համապատասխան անգլալեզու ՋԼՄ-ներից: Աստեղ կարևորվում են նախ և առաջ մասնագիտական ամսագրերը, տարբեր գիտաժողովները, հաստատությունների անվանումները:

Նախագծային աշխատանքի ժամանակ ուսանողները պիտի սովորեն ընթերցել մասնագիտական գրականություն անգլերեն լեզվով:

Առաջին փուլում որոշվում է նախագծի թեման, հիմնախնդիրը և նրա գործնական նշանակությունը: Ուսանողներին առաջարկվում են մշակութային, գրական, սպորտային և այլ ոլորտներին վերաբերող թեմաներ:

Հաջորդ փուլում կարելի է առաջարկել «Նորածնություն» թեման: Ուսանողները բաժանվում են երկու խմբի և փնտրում են համապատասխան տեղեկատվություն նորածնավության պատմությունից:

Երրորդ փուլում առաջարկվում է ցույց տալ, թե ինչ դեր է խաղացել քիմիական արդյունաբերությունը նոր հագուստների, գործվածքների, ինտերյերի, ընդհանրապես նորածնության զարգացման գործում: Օրինակ՝ ուսանողները գտնում են տեղեկատվություն ժամանակակից զուգագուլպաների առաջացման պատմությունից, որտեղ առաջնային դեր է հատկացվում քիմիական արդյունաբերության զարգացմանը:

Նախագիծը կարող է լինել երկարաժամկետ, լայնածավալ, ինչպես նաև կարճաժամկետ՝ ներառել մի լսարանային պարապմունք:

Ամեն մի լավ կազմակերպած նախագիծ լինում է եռափուլ:

Նախապատրաստական փուլում կարևորվում է դրդապատճառի, նպատակադիրքորոշման և պլանավորման դերը: Այդ փուլում որոշվում է թեման, սահմանվում է հիմնախնդիրը, ճշգրտվում են վերջնական արդյունքները և նպատակները: Այնուհետև ընտրվում է աշխատանքային խումբ, տվյալ թիմի կամ խմբի մեջ բաշխվում են դերերը: Որոշվում են տեղեկատվության սկզբնաղբյուրները, նրա հավաքման և վերլուծության եղանակները: Նախապատրաստական փուլում սովորողները ճշգրտում են տեղեկատվությունը, քննարկում են հանձնարարությունը, հստակեցնում են խնդիրները, առաջարկում են տվյալ խնդիրները լուծելու եղանակները, կատարում են դերաբաշխում, որոշում են տեղեկատվության աղբյուրները: Չնայած մենք գործ ունենք ուսանողակենտրոն ուսուցման ուսումնառության մոդելի հետ, դասախոսն իրականացնում է կարևորագույն գործառույթներ: Նա հիմք է դնում համապատասխան դրդապատճառների ձևավորման, օգնում է սովորողներին հստակեցնել նախագծի նպատակները, մշակել ռազմավարություն: Դասախոսն է որոշում նախագծի իրականացման տևողությունը, սովորողների ներգրավվածության չափը /խումբ, դասարան/:

Ավարտական փուլում տեղի է ունենում նախագծի պաշտպանությունը, ստացած արդյունքների ստուգումը և գնահատումը:

Նախագծի պաշպանության բովանդակային բաղադրիչներն են

- ելույթի պատրաստումը և ձևավորումը,
- նախագծման գործընթացի հիմնավորումը,
- ստացված արդյունքների բացատրությունը,
- ստացված արդյունքների վերլուծությունը,

- նոր խնդիրների բացահայտումը և տվյալների գնահատումը:

Նախագծային աշխատանքի կազմակերպման նախնական փուլում առանձին հարցաթերթիկով նշված հարցերը բաժանվում են ուսանողներին: Դրա նպատակը ոչ միայն նրանց պահանջմունքների վերլուծությունն է, այլև նպատակադիրքորոշումը:

Այդ նպատակով ՀԱՊՅ_ի ուսանողներին բաժանվել են հարցաթերթիկներ.

1. «Ի՞նչ կարող են անել սովորողները օտար լեզուներով» հարցին սովորողները հստակ պատասխաններ չեն տալիս այն առումով, որ մասնագիտական պահանջմունքների բավարարումը առաջնային են համարում ուսանողների միայն 25 %-ը:
2. «Ի՞նչ պետք է սովորեն, որպեսզի կարողանան տվյալ լեզուն կիրառել իրենց նպատակին հասնելու համար» հարցի պատասխանը նույնպես հուսադրող չէ, քանի որ ուսանողների միայն 12 %-ն է գիտակցում, որ օտար լեզուն հնարավոր է յուրացնել տվյալ մշակույթն ուսումնասիրելով:
3. «Ի՞նչն է նրանց ստիպում սովորել» հարցի պատասխանը ցույց է տալիս, որ ուսանողները թերահավատությամբ են մոտենում այս մոտեցմանը, ըստ որի՝ օտար լեզուն նպաստում է մասնագիտական գիտելիքների հարստացմանը կամ արտասահմանցի գործընկերների, հաճախորդների հետ շփմանը:
4. «Ինչպիսի՞ մարդիկ են սովորողները (տարիքը, սեռը, սոցիալական դրությունը, կրթությունը, և այլն)» հարցի մեջ առանձնանում է «սոցիալական դրություն» ենթակետը, քանի որ մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման անհրաժեշտությունը գիտակցում են հիմնականում այն ուսանողները, որոնց ծնողները ուսուցիչ կամ դասախոս են -13 %, գործարար են՝ 19 %, ընդհանրապես՝ ծառայող են 16 %:
5. «Ինչպիսի՞ գիտելիքներ, հմտություններ և փորձ ունեն նրանց դասախոսները» հարցի պատասխանները նույնպես գոհացուցիչ չեն, քանի որ ուսանողները հիմնականում թերահավատությամբ են վերաբերվում իրենց դասախոսների

անգլերենի իմացությանը, երբ խոսք է գնում մասնագիտական կողմնորոշման անգլերեն ենթալեզվի իմացությանը:

6. «Որքանով են հասանելի ուսումնական և տեղեկատվական նյութերը (բառարանները, քերականության դասագրքերը, տեսալսողական միջոցները, համակարգչային սարքերն ու ծրագրերը) » հարցի պատասխանները բավականին լավ են, քանի որ նրանց մեծ մասը ունեն անգլերեն –հայերեն բառարան-78 %, քերականության դասագրքեր` 42 %, տեսալսողական միջոցներ` 87 %, համակարգիչ` 89%: Այլ հարց է, թե ինչ նպատակներով են կիրառում ուսանողներն այդ միջոցները:

7. «Որքան ժամանակ են սովորողները տրամադրում (կարող են կամ ցանկանում են տրամադրել) լեզվի ուսուցմանը» հարցի պատասխանը գոհացուցիչ չէ, քանի որ ուսանողների 78 %-ը ընդամենը 40-50 րոպե է օտար լեզու սովորում շաբաթվա ընթացքում: 12 %-ը ուսումնասիրում է օտար լեզու տարբեր լրացուցիչ դասընթացներում, և միայն 10%-ը բացի բուհական պարտադիր դասընթացից, այցելում է ոչ միայն հատուկ, նախասիրական դասընթացների, այլև հնարավորության դեպքում գնում է վերապատրաստման կամ որևէ ծրագրի է մասնակցել անգլախոս երկրում:

ՀԱՊՅ- ի Վանաձորի մասնաճյուղի ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի, քիմիայի ֆակուլտետներում անցկացվել են անգլերենի նախագծային դասեր:

Առաջին փուլում ուսանողների հետ հստակեցվում են նախագծային աշխատանքի փուլերը և ռազմավարությունը: Դասախոսի առաջարկությամբ ուսանողները խոստանում են ուսումնասիրել քիմիական արդյունաբերության զարգացման միտումները ՀՀ-ում և զարգացած երկրներում: Հեռահաղորդակցական միջոցներից նրանք ընտրում են համացանցը: Նախագծի մեջ ներգրավվում են երկու ուսանողական խումբ` «A»` 24 ուսանող և «B»` 25 ուսանող:

«A» խումբը մի շաբաթվա ընթացքում ուսումնասիրում է քիմիական արդյունաբերության զարգացման միտումները արդի փուլում զարգացած անգլախոս երկներում: Դրա համար նրանք տանը կամ ինտերնետ ակումբներում որոնում և գտնում են համապատասխան տեղեկատվություն ռուսերեն, անգլերեն և հայերեն կայքերից: Նրանք նախօրոք մշակում են այդ տեղեկատվությունը, ընտրում են մյուս խմբի անդամների համար համապատասխան տեքստեր և ընգծում են այդ տեքստերում առանցքային բառերը և բառակապակցությունները:

Առաջին դասի ժամանակ որոշվում է, թե ինչ հաջորդականությամբ են աշխատելու, հստակեցնում են քննարկումների ձևաչափը, բաշխվում են համապատասխան դերերը:

Երկրորդ նախագիծը վերաբերում է ՀՀ-ում քիմիական արդյունաբերության զարգացմանը: Այստեղ նույնպես կատարվում է դերերի բաշխում: Ուսանողների մի մասը հանդես է գալիս որպես հաղորդավար-մեկնաբաններ, փորձագետներ, վերլուծաբաններ կամ գործազուրկ բանվորներ և անգամ թոշակառուներ:

Երկրորդ՝ B խումբը հավաքում է Հայաստանի մասին անգլերեն լեզվով տեղեկատվություն թե՛ հայկական, թե՛ արտերկրի կայքերից: Նրանց հիմնական նպատակը Վանաձորի քիմիական կոմբինատի լիարժեք վերաթողարկման մոտեցումների մշակումն է:

Նախագծի իրականացման ավարտական փուլում երկու խմբի ուսանողները կազմակերպում են Ազգային ժողովի քննարկումներ՝ նշված հարցերի վերաբերյալ: Որոշ «փորձագետ-պատգամավորներ» ներկայացնում են իրենց առաջարկությունները: Ազգային ժողովը մշակում է օրինագիծ, փոփոխություններ բյուջեի համապատասխան հոդվածներում, որոնք նպաստում են քիմիական արդյունաբերության զարգացմանը ՀՀ-ում: Տարբեր օրաթերթեր և շաբաթաթերթեր

ներկայացնող լրագրողները կազմակերպում են մամլո ասուլիս՝ հայտնելով իրենց վերաբերմունքը Ազգային ժողովի քննարկումների մասին:

Փաստորեն ավարտական փուլում համացանցային նախագիծը վերածվում է հեռուստատեսային նախագծի, որտեղ նախագծի բոլոր անդամներին խոսք է տրվում: Նրանք իրենց ելույթները կարող են պատրաստել ինքնուրույն, արտալսարանային աշխատանքի ժամանակ:

Եզրակացություն

1. Արդի փուլում օրեցօր աճում է միջմշակութային հաղորդակցության դերը, որը ենթադրում է շփման կադապարների իմացություն, մշակութային կարծրատիպերի, արժեքային կողմնորոշիչների, մշակույթի պատկերների և խորհրդանիշերի, նորագույն հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում:

2. Հեռահաղորդակցական տեխնոլոգիաներով ներմուծվող, ուսուցանվող մասնագիտական կողմնորոշման տեքստերը աչքի են ընկնում իրենց բովանդակային և գործառական բնութագրերով: Դրանք կարող են լինել համագիտական, մասնագիտական, նեղ մասնագիտական: Մասնագիտական կողմնորոշման տեքստերը ներկայացնում են տարբեր նշանային համակարգեր, որոնց յուրացումը նպաստում է ապագա ճարտարագետների հեռահաղորդակցական իրազեկության զարգացմանը:

3. Հեռահաղորդակցական տեխնոլոգիաներով ուսուցման առավելություններից մեկն այն է, որ տեքստերում տեղեկատվությունը ներկայացվում է թե՛ մասնագիտական, գիտական տեքստերի, թե՛ խոսքային և ոչ խոսքային /պատկերների, նկարների, լուսաբանումների/ նշանների միջոցով:

4. Համակարգչային բառապաշարն աչքի է ընկնում իր ոճաժանրային առանձնահատկություններով: Այն մի կողմից կապված է համակարգչային տեխնիկայի զարգացման հետ, մյուս կողմից ձևավորվում է համացանցի զարգացման տրամաբանությամբ: Հիմնական միտումն այն է, որ չեզոք համարվող տերմինները աստիճանաբար մտնում են առօրյա-խոսակցական բառապաշար, երբեմն վերածվում սլենգի կամ ծածկալեզվի:

5. Նպատակահարմար է հեռահաղորդակցական տերմինների ուսուցումն իրականացնել խառը կամ կրեոլ տեքստերի միջոցով, երբ ամեն մի տերմին տրվում է նկարով, գծապատկերով, կամ եթե հնարավոր է անգլերեն լեզվով հնչող տեսահոլովակով: Արդյունավետ է, երբ ուսանողները համացանցում ինքնուրույնաբար գտնում են մասնագիտական բնույթի տարբեր ֆիլմեր, նկարազարդ ուղեցույցներ, մասնագիտական տեքստեր և պատրաստում են ներկայացումներ, զեկույցներ, ֆիլմերի դիտումներ:

6. Տեխնիկական բուհի ուսանողները սիրով են ներգրավվում հետազոտական աշխատանքի մեջ: Արդյունավետ է այն, ինչ տեղի է ունենում

անգլերենի ուսուցման ինտեգրատիվ մակարդակում, քանի որ ուսանողները մի կողմից յուրացնում են հեռահաղորդակցական, համակարգչային տերմինները, մյուս կողմից՝ մասնագիտական կողմնորոշման բառապաշարը:

7. Փորձարարական ուսուցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում ներգրավված ուսանողները ձեռք են բերել սեփական ռեսուրս-աշխատամիջոցները ստեղծելու, մասնագիտական տեքստերի հետ աշխատելու կարողություններ: Անգլերենի յուրացման տեսանկյունից ուսումնասիրելով և վերանայելով տեղեկատվական-համակարգչային տերմինները և տերմինակապակցությունները, ուսանողները մեծ բավականությամբ են կիրառում իրենց համակարգչային գիտելիքները անգլերենի ուսուցման գործընթացում:

ԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անգլերեն-հայերեն համակարգչային և մաթեմատիկական տերմինների գործնական բառարան/Կազմ.՝ Կ. Կարապետյան, Վ. Գրիգորյան: Խմբ.՝ Ղարվին Սորենսեն, Սևադա Խաչատրյան. - Ե.: Լիմուշ, 2011. – 180էջ:
2. Անգլերեն-հայերեն բառարան: Հ. Ա. Ասմանգուլյանի և Մ. Ի. Հովհաննիսյանի խմբագրությամբ: Շուրջ 30000 բառ: «Հայաստան» հրատ., Երևան 1991. 144էջ:
3. Ասատրյան Ս. Պ. Անգլերեն պատմագիտական տերմինաբանության ընտրությունը և մեթոդական տիպականացումը՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման պայման (թեկն. առ.), Ե., 2006, 21 էջ:
4. Աստվածատրյան Մ., Թերգյան Գ. և ուրիշներ, Եվրոպական լեզվական թղթապանակ Հայաստանի դպրոցների տարրական դասարանների համար, Երևան, 2007:

5. Попова М.В. Виртуальная межкультурная коммуникация: возможности и перспективы в обучении языкам и культурам. Языки и культуры народов мира в лингводидактической парадигме (Лемпертовские чтения – IX). Сборник статей по материалам Международного научно-методического симпозиума «Языки и культуры народов мира в лингводидактической парадигме (Пятигорск, 30-31 мая 2007г.). Пятигорск: ПГЛУ, 2007. – 444с. – С.312.
6. Есаджанян Б.М. Обучение языкам в гомогенной среде как гарант формирования поликультурной личности. Известия АПСН, Вып. 5, М., 2001. – С. 13 – 20.
7. Конецкая В.П. Лексико-семантические характеристики языковых реалий. /Приложение к лингвострановедческому словарю Великобритании под редакцией Рогова Е.Ф. М., 1980 – С. 463-466.
8. Жлуктенко Ю.А., Лингвистические аспекты двуязычия. Киев. 1974. – 177с.

